ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ <<Կոմիտասը որպես հայ կոմպոզիտորական դպրոցի հիմնադիր>>

Հետազոտող ուսուցիչ՝ Զուլիետա Պետրոսյան

Ղեկավար՝ Կարինե Ղազարյան

Նորավանի միջնակարգ դպրոց

Արմավիր 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան	3
Կոմիտասը որպես հայ կոմպոզիտորական դպրոցի հիմնադիր	4
Ներկայացված է մեկ դաս	15
Եզրակացություն	17
Օգտագործված գրականության ցանկ	18

Նախաբան

Կոմիտասը դարակազմիկ երևույթ է, հայ երաժշտական մշակույթի այն բացառիկ երախտավորը, որի մասին գրվել են և շարունակվում են գրվել աննախադեպ թվով հետազոտություններ, մենագրություններ, ատենախոսություններ[1], ժողովածուներ, հոդվածներ, հուշագրություններ, գեղարվեստական ստեղծագործություններ: Այդ աշխատասիրությունների մեծաքանակությունն արդեն պայմանավորել է կոմիտասագիտության սկզբնավորումն ու զարգացումը:

Կոմիտասն իր ստեղծագործական ոչ երկարատև կյանքի ընթացքում ծավալեց բազմակողմանի ու արդյունաշատ գործունեություն՝ մեծապես կանխորոշելով հայ երաժշտական արվեստի զարգացման հետագա ուղիները:

Կոմիտասը հայ ազգային դասական երաժշտական դպրոցի հիմնադիրն է. իր նախորդների նվաճումների և համաշխարհային հարուստ փորձի օգտագործման ճանապարհով նա ստեղծեց հայ երաժշտության ազգային ոճը՝ խարսխված հայ ժողովրդական երգի վրա: 1897-ի հունվարին Կոմիտասը Բեռլինից Գևորգյան ճեմարանի տեսուչ Կարապետ Կոստանյանին գրում է. «Ուսուցչապետս միշտ կրկնում է.

«Դուք ստեղծել եք երաժշտական ազնիվ և ինքնուրույն ոճ, որ կարմիր գծի պես ձեր ամբողջ գրվածքների և շարադրությանց մեջ պայծառ անց է կենում. այդ ոճը ես անվանում եմ հայկական ոճ, ասում է, որովհետև մեր երաժշտական ծանոթ աշխարհի համար նորություն է»[2]: Մեներգերի և խմբերգերի կողքին՝ նրա կոմպոզիտորական գործունեության ուրույն ճյուղն են ներկայացնում «Սիփանա քաջերը», դաշնամուրային պարերը, ինչպես նաև հատվածներն «Անուշ» օպերայից, որը, ցավոք, մնաց անավարտ[3]:

---

[1] Ց. Բրուտյան. Կոմիտաս, Երևան, 1969: Ս. Գասպարյան. Կոմիտաս, Երևան, 1947: Գ. Գյոդակյան. Կոմիտաս, Երևան, 2000: Ն. Թահմիզյան. Կոմիտասը և հայ ժողովրդի երաժշտական ժառանգությունը, Փասատենա, 1994: Ռ. Թերլեմեզյան. Կոմիտաս, Երևան, 1995: Ի. Յոլյան. Կոմիտաս, Երևան, 1969: Խ. Սաֆարյան. Կոմիտաս սքանչելագործ, Երևան, 1999: Г. Геодакян. Комитас. Ереван, 1969. А. Шавердян. Комитас (ред. Р. Атаян, Н. Тагмизян). М., 1989 և այլն:

[2] Տե՛ս Կոմիտասական, հ. 1, Երևան, 1969, հ. 2, Երևան, 1981:

[3] Տե՛ս Լ. Սահակյան. Կոմիտասագիտությունը հայ երաժշտագիտության մեջ, ատենախոսություն արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման, Երևան, 2007: 7 Կոմիտաս. Նամակներ, Երևան, 2000, էջ 85: 3

Կոմիտասը որպես հայ կոմպոզիտորական դպրոցի հիմնադիր

Կոմիտասը հայ երգը տարածեց նաև հայերի շրջանում և «ստիպեց» նրանց, որ սիրեն այն: Նա իր ժողովրդին վերադարձրեց սեփական երգը: Մինչ այդ՝ Հայաստանից դուրս, անգամ հայ մտավոր կյանքի կենտրոններում՝ Կ. Պոլսում, Թիֆլիսում, Վենետիկում, Մոսկվայում, Բաքվում, հայ ժողովրդական երգը քիչ էր ծանոթ: Երգվում էին հիմնականում «ազգային» երգեր, որոնց բառերը հայկական էին՝ հայրենասիրական, բայց երաժշտությունը մեծ մասամբ կտորներ էին եվրոպական օպերաներից կամ էլ փոխառված ծանոթ եվրոպական երգերից («Արի, իմ սոխակ», «Մեր հայրենիք» և այլն): Քչերին է հայտնի Կոմիտասի վերաբերմունքն ազգային-հայրենասիրական մի շարք երգերի հանդեպ:

Հ. Թումանյանի «Կոմիտաս ջան, ի՞նչ կարծիքի ես մեր էսպես կոչված ազգային-հայրենասիրական երգերի մասին» հարցին Կոմիտասը թթու դիմախաղով պատասխանել է. «Հրաժարելով հրաժարիմ, դրանք բոլորը, բացառությամբ մի երկուսի, գեղարվեստական ո՛չ մի արժեք չունեն, մանավանդ որ նրանց եղանակների մեծ մասը օտար է:

– Իսկ ի՞նչ կասես մեր հեղափոխակա՛ն երգերի մասին:

– Կասեմ՝ գռեհկություն, այլանդակություն, որի դեմ պետք է պայքարել ամբողջ ոգով,– ասաց Կոմիտասը շեշտակի:

– Իսկապե՞ս:

– Հաստատապես: Հապա տես, թե ինչի՛ է նման այս «հեղափոխական» երգը, որ դժբախտաբար սաստիկ տարածված է:

– Եվ Կոմիտասը սկսեց երգել «Դաշնակցական խումբ, գնանք մենք Սասուն»՝ ճշտությամբ վերարտադրելով նրա գռեհիկ, անիմաստ շեշտադրությունը, խոսքերի ու եղանակի բացարձակ անհամատեղությունը:

Արվեստի բացակայությունն այդ երգի մեջ և առհասարակ նրա բացասական տպավորությունն այնքան ակներև էր, որ Թումանյանը լիովին ազատություն տվեց իր բարձրաձայն ծիծաղին: – Դրուստ որ, ինչ մազալու բան է,– ասաց նա ու նորից քահ-քահ ծիծաղեց:

– Իսկ հիմա լսիր ժողովրդական երգի այս քառատողը,– առաջարկեց Կոմիտասը՝ իրեն հատուկ զարմանալի վարպետությամբ երգելով. «Ես մի չոր ծառ էի, Դուն գարնան արև, Քո սիրով ծաղկեցավ Իմ ճյուղն ու տերև…»:

– Ինչ գեղեցիկ համեմատություն, ինչ խորություն ու պարզություն,– բացականչեց նա հիացած:

– Ես մեծ սիրով իմ անունը կդնեի այդ գոհար քառատողի տակ:

– Բա ինչ էիր կարծում, իմ սիրելի բանաստեղծ, այդպիսի գոհարների անսպառ աղբյուր է հայ ժողովուրդը,– ասաց Կոմիտասը բավականության ջերմ զգացումով»: Հայ երիտասարդությունը տեղյակ չէր հայ ինքնուրույն երաժշտության գոյության մասին: Եվ ահավասիկ Կոմիտասն իր հմայքով, հրատարակություններով, կազմած երգեցիկ խմբերով, տարբեր քաղաքներում տված համերգներով ու բանախոսություններով ջնջեց հայ ժողովրդի անտարբերությունն ու անգիտությունը սեփական երգի հանդեպ:

Գրվել են առանձին երգեր ու խմբերգեր, այդ թվում՝ փերիների երգը՝ «Եկեք քույրեր» խմբերգը, «Վուշ-վուշ, Անուշ» խմբերգը, Սարոյի խոստովանությունը՝ «Աղջի անաստվածը» (մեղեդու հաՄար հիմք է ծառայել քրդական«Լուր-դալուր»-ի՝ հովվական սրնգի այն եղանակը,որը Էջմիածնում Կոմիտասի համար ջութակով նվագել է Վրթանես Փափազյանը, և Կոմիտասը տեղն ու տեղը գրի է առել դա[4]), Անուշի երգը՝ «Ասում են՝ ուռին», Սարոյի «Ախ, Անուշ, Անուշ» ասերգը, Անուշի մենախոսությունը՝ «Ասում են՝ մի օր» կենտրոնական հատվածով, «Աղջիկ բախտավոր» երգը՝ «Համբարձում յայլա» կրկներգով, Սարոյի երրորդ երգը՝ «Բարձր սարերը», «Քաղվորի» «Սիրուն աղջիկ» երգը և այլն:

Կոմպոզիտորը չհասցրեց ավարտել օպերան. «այդ մեղեդիները ավարտված օպերա չեն,– նշում է Ռ. Աթայանը,– այլ՝ են միայն օպերայի երգային մասի

[4] «Անուշի» պահպանված հատվածների ուսումնասիրման գործում ծանրակշիռ է Ռոբերտ Աթայանի ներդրումը: Ձեռնարկելով օպերայի երաժշտության ուսումնասիրությունը՝ նա կազմակերպեց երաժշտական հատվածների ցուցադրումը: Պահպանված հատվածների կենդանի կատարումը տեղի ունեցավ նախ՝ հեռուստատեսությամբ, ապա՝ Թումանյանի տուն-թանգարանում՝ բանաստեղծի մահվան 50-ամյակի օրը հրավիրված գիտական նստաշրջանում և ապա՝ Արվեստի աշխատողների տանը ՀԽՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի կազմակերպած հատուկ երեկոյին: Այդ առիթով առաջին անգամ հնչեցին Անուշի և Սարոյի մեներգերը՝ Արաքս Մանսուրյանի ու Արզաս Ոսկանյանի կատարմամբ և մի շարք խմբերգեր:

մեղեդիական թեմաներ, ուրվագրեր: Հարցն այն է, որ իրենց այդպիսի վիճակում էլ նույն նյութերը գեղարվեստական նշանակալից շահեկանություն ունեն»[5]:

Օպերայի անավարտության պատճառները շատ են, սակայն հիմնականը Կոմիտասի գերծանրաբեռնվածությունն էր: Մի կողմից՝ ճեմարանի դասերը, Մայր աթոռի երգեցիկ խմբի ղեկավարումը, Միջազգային երաժշտական ընկերության գիտական ժողովածուի համար ուսումնասիրությունները, դասագրքերի պատրաստումը, Մ. Աբեղյանի հետ ժողովրդական երգերի բառերի խմբագրումը, մյուս կողմից՝ երաժշտական գործիքներ չունենալու հանգամանքը: «Խցումս մի շատ փոքրիկ (4 ութնյակ) երգեհոն ունեմ. ինչ արած. անճարը կերել է բանջարը»,– կգրի նա Մ. Թումանյանին: Մյուս կողմից՝ դեր խաղացին նաև սիմֆոնիկ երաժշտություն գրելու Կոմիտասի փորձի պակասը, ինչպես նաև մասնագիտորեն մշակված լիբրետոյի բացակայությունը:

Կոմիտասը մոռացությունից փրկեց հայ գեղջուկի երգը: Նրա գործունեութ յունն այս տեսակետից համեմատելի է Մեսրոպ Մաշտոցի սխրանքի հետ: Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի դիպուկ գնահատմամբ՝ «Ինչպես սուրբ Մեսրոպ քառսեն դուրս բերավ և բյուրեղեց ձայները հայ բարբառին, և իր ազգին ու աշխարհին պարգևեց կոթողը հայերեն լեզուին, այնպես ալ Կոմիտաս վարդապետ՝ պեղեց, մաքրեց և լույս աշխարհ բերավ կույս աղբյուրը հայ երգին:

Եվ բազում տարիներ, անդուլ, անհոգնաբեկ, միշտ նոր ավյունով ու ստեղծարար տենդով, այդ աղբյուրեն հայ երգին լույսը բաշխեց իր ժողովրդին»[6]: Իր ողջ կյանքում նա հավաքում ու գրա- ռում էր հայ ժողովրդական երաժշտությունը, քուրդ ու թուրք ժողովրդական երգերը նույնպես: Սակայն իր կենդանության օրոք դրանք ամբողջությամբ հրատարակելու հնարավորություն Կոմիտասը չունեցավ[7]: Կոմիտասը համոզված էր՝ «ով ուզում է ստեղծել հայ կուլտուրական երաժշտություն, նա պիտի հիմք ընդունի ժողովրդական երգը, նա պիտի ղեկավարվի այդ երգի ոճական սկզբունքներով, այլապես նրա ստեղծած երաժշտությունը չի լինի հայկական երաժշտություն»[8]:

---

[5] Կոմիտասն այսպես է անվանել պոեմի հերոսներից մեկին՝ «Անցվոր ախպեր»-ին:
[6] Գ. Գյոդակյան. նշվ. աշխ., էջ 79
[7] Կոմիտասի ազգագրական ժառանգությունը հրատարակվեց նրա «Երկերի ժողովածուի» ակադեմիական հրատարակության 9–14-րդ հատորներում (1999–2006):
[8] Վ. Տեր - Առաքելյան. Նյութերի ժողովածու, Երևան, 1998, էջ 107:

Կոմիտասը բազմաձայնեց հայ ժողովրդական երգն ու հոգևոր եղանակները՝ ստեղծելով ազգային բազմաձայնությունը (պոլիֆոնիան): Վիեննայի համալսարանի երաժշտության դասախոս, պրոֆեսոր Վիլեշ Ետոնը Ա. Չոպանյանին գրել է. «Կզարմանամ Կոմիտասի արտակարգ ընդունակության վրա: Շատ լավ ըմբռնելով : Այն բոլոր երգերը զոր անձամբ լսած եմ Կոմիտասեն կամ ուսումնասիրած եմ, կապացուցանեն, որ Կոմիտաս եզական դեմք է՝ իբր դաշնակող և իբր փոլիֆոնիստ»: Իսկ գերմանացի հայտնի երաժշտագետ ու խմբավար Ալոիս Մելիշարը Մ. Բաբայանին ուղղված նամակում նկատել է. «…Կոմիտաս աննման վարպետ է. անոր դաշնակումը (harmonie) աներևակայելի դժվար ու գունավոր է, անոր մեներգերի ու խմբերգերու շարահյուսումները անկարելի է գերազանցել»:

Կոմիտասը հայ երաժշտության քարոզիչն էր՝ հայ երգի առաքյալն ինչպես օտարների, այնպես էլ հենց հայերի համար: Նրա կյանքի նպատակներից էր համոզել աշխարհին, որ հայն ունի իր ինքնուրույն երաժշտությունը: Եվ ճշմարտության որոնման ճանապարհին Կոմիտասն անկոտրում էր. նա անգամ վտանգեց իր հարաբերությունները թանկագին ուսուցչի՝ Մակար Եկմալյանի հետ: Բանն այն է, որ Եկմալյանը հայ երաժշտությունը համարում էր պարսկա-արաբական երաժշտության մի ճյուղը՝ բացառելով նրա ինքնուրույնությունը:

1898-ին «Արարատ» հանդեսի Գ. և Դ. համարներում տպագրվում է Կոմիտասի՝ Բեռլինից ուղարկած գրախոսականը՝ «Երգեցողութիւնք Ս. Պատարագի: Փոխադրեալ Ի Խաղս Եւրոպականս Եւ Ներդաշնակեալ Ի Ձեռն Մ. Եկմալեան, Տպագրեալս Պ. Գ. Մեղուինեան:

Լայպցիկ - Բրեյտկոպֆ եւ Հերտել, Վիեննա, Մխիթարեան տպարան, 1896» վերնագրով: Կոմիտասը, շատ բարձր գնահատելով Եկմալյանի նորերս լույս տեսած «Պատարագը», գրում է. «Հարգելի Պրն Մակար Եկմալյանը մեր երգեցողության ամայի անդաստանի մեջ ներդաշնակության անդրանիկ բուրաստանը տնկեց: Սրտանց ուրախ ենք, որ Հայերս այժմ կարող ենք պարծել, թե մենք էլ հետ չենք մնացել վսեմ գեղարվեստի և կատարելագույն երաժշտության զարգացումից»[9]:

Սակայն, միևնույն ժամանակ, նա նկատում է. «…մեր երաժշտությունն էլ, յուր ամբողջ ազգային ոգվովն ու ոճով նույնքան արևելյան է, որքան պարսիկ-արաբացին. բայց ոչ պարսիկ-արաբականը մերն է և ոչ էլ մերը նորա մի մասն է. այլ խնդիր է, թե

[9] Գրական նշխարք Կոմիտաս վարդապետի բեղուն գրչեն, էջ 110: 2

նոցա ազդեցությանն է ենթարկվել. ճիշդ այնպես, որպես մեր լեզուն Հինդ-եվրոպականի մի ճյուղն է, այսպես են և պարսկերենը, քրդերենը, գերմաներենը և այլն, բայց մեր լեզուն ո՛չ գերմաներեն, ո՛չ քրդերեն և ո՛չ էլ պարսկերեն է»[10]: Կոմիտասն անում է իր հայտնագործությունն առ այն, որ հայ ժողովրդական և հոգևոր երաժշտության հիմքում ընկած են շղթայված տետրախորդները, և դրանով իսկ այն տարբերվում է եվրոպական մաժորից ու մինորից:

«Քառյակների դրությամբ են հորինված մեր թե՛ ժողովրդական, թե՛ եկեղեցական եղանակները, որոնք քույր եղբայր են և նույն կազմությունն ունին: Քառյակների դրության չենթարկվողներն օտարամուտ են:

Ուրեմն պարզ է մեր եղանակների կազմության գաղտնիքը. այսպես զուր ջանք կլիներ, եթե եվրոպական Majeur, Mineur կամ Dur, Moll ձևերին համապատասխանող ելևէջներ որոնեինք մեր երաժշտության մեջն էլ. չենք գտնի, որովհետև չկան»[11],– փաստում է Կոմիտասը: Գրախոսականին հաջորդում է վիրավորված Եկմալյանի պատասխանը՝ նույն «Արարատում»: Չնայած Եկմալյանի հանդեպ տածած իր խորին պատկառան- քին ու երախտագիտությանը՝ Կոմիտասը, որպես ճշմարիտ գիտնական ու երա- ժիշտ, չէր կարող մեղանչել ճշմարտության դեմ՝ հանուն սիրելի ուսուցչի հետ իր բարեկամության. մարդկային խառնվածքի հատկանիշ, որն այսօր էլ, ավաղ, հան- դիպում է սակավադեպ:

51-ամյա Մ. Եկմալյանը կյանքից հեռացավ 1905-ի մարտի 6-ին, Թիֆլիսում՝ այդպես էլ չներելով Կոմիտասին ու չհաշտվելով նրա հետ… Օրեր անց՝ մարտի 20-ին, Էջմիածնի Գևորգյան ճեմարանի երգեցիկ խումբը Կոմիտասի ղեկավարությամբ ելույթ ունեցավ եկեղեցում՝ Մ. Եկմալյանի հիշատակին կատարվող հոգեհանգստի ժամանակ: 1899-ի ապրիլին պրոֆեսոր Օսկար Ֆլայշերի նախաձեռնությամբ Բեռլինում հիմնվում է Միջազգային երաժշտական ընկերության բեռլինյան մասնաճյուղը. որպես հայկական երաժշտության ներկայացուցիչ Ընկերության անդամ է ընտրվում Կոմիտասը:

Ընկերության՝ մայիսի 10-ին գումարված նիստում Կոմիտասը գերմաներեն կարդում է «Հայոց եկեղեցական և աշխարհիկ երաժշտությունը» թեմայով բանախոսությունը, որի առթիվ Օ. Ֆլայշերը նկատում է. «…Կոմիտասի կարդացած

[10]Նույն տեղում, էջ 100:

[11] Կոմիտաս վարդապետ. Ուսումնասիրություններ և հոդվածներ, գիրք Ա, Երևան, 2005, էջ 92

դասախոսությունը հայ հոգևոր և ժողովրդական երաժշտության մասին պիտի մնա անմոռանալի: Առաջին անգամն է, որ Բեռլինում այդպիսի մի դասախոսություն է կարդացվում և գուցե մինչև այժմ Փարիզի աշխարհանդեսում անգամ այդպիսի դասախոսություն չի կարդացվել»:

Օ. Ֆլայշերի նախաձեռնությամբ Բեռլինում հունիսի 14-ին տեղի է ունենում Կոմիտասի՝ հայ ժողովրդական և հոգևոր երաժշտությանը նվիրված երկրորդ դասախոսությունն ու համերգը: Անհրաժեշտ բացատրություններից հետո Կոմիտասը ցույց է տալիս հայ ժողովրդական և եկեղեցական եղա- նակների կազմության տարբերությունները, կատարվում են քրդական, պարսկական և թուրքական երգեր, Կոմիտասը ներկայացնում է դրանց և հայկական եղանակների միջև եղած տարբերությունները:

Կոմիտասի ելույթից երկու օր անց՝ հուլիսի 16-ի նամակում Օ. Ֆլայշերը գրում է. «Ձեր հմտալից և խորիմաստ դասախոսության միջոցով խորունկ մի հայացք ձգել տվիք դեպի այն երաժշտությունը, որը մեզ համար ցարդ գրեթե փակ էր, և որը մեզ՝ արևմտաններիս, շատ բան ուսուցանել կարող է:

…Դուք կարող եք արդի գիտությանն անգնահատելի ծառայություն մատուցել, եթե հրատարակեք Ձեր աշխատությունները»[12]: 1905-ի ապրիլի 1-ին և 3-ին Թիֆլիսի Արտիստական ընկերության դահլիճում տեղի են ունենում Կոմիտաս վարդապետի ղեկավարած ճեմարանական սաների՝ 60 հոգանոց քառաձայն երգչախմբի համերգները, իսկ ապրիլի 6-ին Հովնանյան օրիորդաց դպրոցի դահլիճում Կոմիտասը կարդում է բանախոսություն՝ հայ եկեղեցական և ժողովրդական երաժշտության մասին՝ իբրև բացատրություն երգելով առանձին կտորներ:

«Փարիզի հայկական միության» ու Արշակ Չոպանյանի նախաձեռնությամբ 1906-ի դեկտեմբերի 1-ին «Salle des Agriculteurs»-ի մեծ սրահում տեղի ունեցած հայկական նվագահանդեսի ընթացքում ելույթ ունեցան Շուշանիկ և Մարգարիտ Բաբայան քույրերը, Փարիզի կոնսերվատորիայի ուսանողներ Արմենակ Շահմուրադ յանը, Պ. Մուղունյանը, երգեցիկ խումբը (բաղկացած երեսուն հոգուց)՝ Կոմիտասի ղեկավարությամբ. ծրագրում՝ Կոմիտասի մշակած ու բազմաձայնած խմբերգեր ու մեներգեր26, դաշնամուրային պարերը:

[12] Գրական նշխարք Կոմիտաս վարդապետի բեղուն գրչեն, էջ 14-15:

Համերգին ջերմորեն արձագանքում է մամուլը: «Le Mercure Musical»-ում երաժշտագետ, քննադատ Լուի Լալուան գրում է. «Մեզմե ոչ մեկը, կարծեմ, բացի շատ սակավաթիվ իրազեկներե, կրնար մտքեն անցնել գեղեցկություններն այդ արվեստին, որ իրապես ոչ եվրոպական և ոչ արևելյան, այլ ունի նկարագիր մը՝ աշխարհիս մեկ հատիկ՝ շնորհալի քաղցրության, խորաթափանց հուզման և ազնվական գորովի: Փափուկ, սակայն որոշ ոլորումներով մեղեդիներ, ճապուկ ու կենդանի կշռություններ, երաժշտություն մը, որ ամբողջովին սրտեն կբխի և կհոսի ինչպես ջուր մը զով, թափանցիկ ու պայծառ:

Արև կա այդ երգերուն մեջ, բայց ոչ Արաբիո և Պարսկաստանի անապատներուն հրատոչոր արևը, այլ ոսկեզօծ լույս մը, համակ երկրային, որուն ջերմությունը փայփայանք մըն է սարերու սպիտակության, անտառներու կանաչին և քաղցրակարկաչ առուներու ցոլքերում: Թերևս չեն սխալիր անոնք, որ Եդեմի դրախտը Հայաստանի մեջ՝ Արարատ լեռան ոտքը կզետեղեն:

Որովհետև այդ երկիրը, որուն պատմությունը այնքան դժբախտ է եղած, արդարև ընտրյալ աշխարհ մըն է, ուր բնությունը՝ հուռթի ու բարյացակամ՝ իր բարիքները կշնորհե մարդուն»[13]: Իսկ «Le Monde Musical»-ը գրեց. «Ահա մի նորություն, մի հայտնություն, որ մեզ տանում է հեռու և ապրել տալիս մի մոռացված ժողովրդի կյանքով:

Եվ մի՞թե դեռ չի տեսնում մարդ այն երկար սև ուրվականի կիսադեմքը, որի բարձր վեղարը ավելի երկարացնում էր նորա ստվերը, դեռ չե՞ն զգում այն երգերի խորհրդավորութունը, այն քաղցր մելամաղձոտությունը, այն հնչուն ճոխությունը, որ մաղթում են Ամենակարողին կամ գովում բնության գեղեցկությունը, սիրելի «հովը», «խնկի ծառը», «բարերար անձրևը», «սիրելի եզը», «իմ եղբայրը» կամ այն պարերի անդիմադրելի ուժը...»[14]:

1907-ի հունիսի 1-ին Ժնևի կոնսերվատորիայի մեծ դահլիճում Կոմիտասի ղեկավարությամբ տեղի է ունենում հայ և ռուս ուսանողներից կազմված երգչախմբի համերգը, որից գոյացած 2000 ֆրանկի հասույթն ուղարկվում է Վանի սովյալներին:

Հետևում են Կոմիտասի դասախոսությունները Ժնևում, Լոզանում և Բեռնում: Իսկ հուլիսի վերջերին Կոմիտասը Ա. Չոպանյանի հետ մեկնում է Վենետիկ՝ Մխիթար-

[13] Ա. Չոպանյան. նշվ. աշխ., էջ 474:
[14] Գրական նշխարք Կոմիտաս վարդապետի բեղուն գրչեն, էջ 54:

յանների ձեռագրատանը մասնագիտական ուսումնասիրություններ կատարելու նպատակով: Հուլիսի վերջին Մուրադ-Ռաֆայելյան վարժարանում Կոմիտասը հանդես է գալիս հայ ժողովրդական և եկեղեցական երաժշտության մասին բանախոսությամբ, իսկ հուլիսի 17-ին Լոզանից Կ. Կոստանյանին գրում. «Իտալիան շատ գեղեցիկ է, բայց մեր դժբաղդ հայրենիքն ավելի գեղեցիկ է» 1908-ի ապրիլի 1-ին Բաքվի Ժողովարանի դահլիճում Կոմիտասի ղեկավարած երգչախմբի համերգի ընթացքում ներկայացվում են 24 երգ ու նվագ Կոմիտասի ստեղծագործություններից:

Համերգին նախորդում է Կոմիտասի դասախոսությունը հայ երաժշտության մասիններով ու դասախոսություններով հանդես է գալիս Բաթումում: Հուլիսի 25-ին Քյոթահիայի տղամարդկանց, իսկ հուլիսի 26-ին՝ կանանց համար տեղի են ունենում Կոմիտասի կազմած (վարժարանի աշակերտներից) և ղեկավարած քառաձայն երգեցիկ խմբի համերգները. մեներգիչ՝ Կոմիտաս:

Շուտով Կոմիտասն անցնում է Աֆրոն-Գարահիսար, Էսկիշեհիր, Բրուսա, որտեղ էլ սեպտեմբերի 12-ին կայանում է Կոմիտասի ղեկավարած 90 հոգանոց երգչախմբի համերգը: Սեպտեմբերի 25-ին Կոմիտասը ժամանում է Կ. Պոլիս և ձեռնամուխ լինում նոր երգչախմբի ստեղծմանը: Նոյեմբերի 21-ին Կ. Պոլսի Պտի Շանի ձմեռային թատրոնում հանդիսավորապես տեղի է ունենում 300 հոգուց բաղկացած երկսեռ երգչախմբի անդրանիկ համերգը՝ Կոմիտասի ղեկավարությամբ՝ խափանելով խռովարարների դավերն ու Պատրիարքարանի հարուցած արգելքները[15]:

1911-ի ապրիլի 6-ին Կոմիտասն Իզմիրից մեկնում է Եգիպտոս. ապրիլ-մայիսին Ալեքսանդրիայում ու Կահիրեում հանդես է գալիս համերգներով ու դասախոսություններով: Հունիսի 16-ի համերգի առիթով Տիգրան Կամսարականը գրեց. «...Անցյալ գիշեր... երգելով ու բարբառելով, զուարճաբանելով, երբեմն ալ միշտ հանկուցանելով, Հայաստան ուխտագնացության տարիք մեզի. կամ լավ ևս է ըսել քիչ մը Հայաստան բերիք Եգիպտոսի հայերուս. մենք կը կարծեինք, թե հայ կրոնավորը, որ Էջմիածնեն կու գա՝ մյուռոն միայն կը բերե, դուք Մասիսն ու Արագածը փոխադրեցիք հոս պահ մը, ո՞վ ըսավ, թե լեռները չեն քալեր...»[16]:

---

[15] Մ. Մազմանյան. նշվ. աշխ., էջ 183:

[16] Տե՛ս Փ. Թերլեմեզյան. Կոմիտասի մասին.– Կոմիտասը ժամանակակիցների հուշերում և վկայություններում, Երևան, 2009, էջ 256:

Կոմիտասն ԱլեքսանդրիաՅից մեկնում է Փարիզ,Անգլիա,Փարիզ, Բեռլին,Դրեզդեն, 1912-ի հունիսին կրկին անցնում Փարիզ, դասախոսություններով հանդես գալիս Անգլիայում, վերադառնում Բեռլին, Լայպցիգ և հուլիսի վերջին վերադառնում Կ. Պոլիս: 1914-ի հունիսի 1–15-ը Կոմիտասը Փարիզում մասնակցում է Միջազգային երաժշտական ընկերության համագումարին:

«Հայկական խազագիտությունը» և «Հայ գեղջուկ երաժշտությունը» երկու հիմնական դասախոսություններից բացի երաժշտական ընտրանու խնդրանքով նա կարդում է երրորդը՝ հայ երաժշտության ամանակի, կշռի, շեշտավորության և տաղաչափության մասին: Հայ ժողովրդական երգի հանդեպ պաշտամունքը Կոմիտասը փոխանցում էր իր շրջապատին, հաճախ նաև՝ օտարներին:

Ինչպես հաճախ նաև՝ օտարներին: Ինչպես հիշում է Ա. Չոպանյանը, «Օր մը, տանս մեջ. զինքը հրավիրեր էի նախաճաշի՝ քանի մը եվրոպացի ու հայ բարեկամներու հետ, որոնց մեջ կային Անտրեոթթի իտալացի տաղանդավոր արձանագործը և մեր Տիրան Ալեքսանյանը: Կոմիտասը երգեց ի մեջ այլոց. «Արի, արի, քե մատաղ» Կալի երգը, աննման կատարելությամբ:

Անտրեոթթի ինքնիրմեն ելած էր. «Դուք՝ հայերդ, կգոչեր, այսպիսի երաժշտություն ունիք և մայրաքաղաքե մայրաքաղաք չե՛ք երթար ամբողջ մարդկությանը զայն հայտնելու…»:– «Ես այս երգը բազմաձայն դաշնակած եմ,– ըսավ Կոմիտաս,– եթե զայն խումբե մը իմանաք, ավելի խոր տպավորություն կկրեք»:– «Ո՛չ,– ըսավ Անտրեոթթի,– պետք չկա ո՛չ դաշնակումի, ո՛չ - խումբի, կբավե որ դուք մենակ բեմ ելլեք և այդ հրաշալի երգը, ձեր այդ հրաշալի կերպովը երգեք»[17]:

Կարևոր էր Կոմիտասի գործունեությունը խազագիտության ասպարեզում: Խազերի վերծանությամբ նա զբաղվեց շուրջ 20 տարի՝ 1893-ից մինչև իր ստեղծագործական կյանքի վերջին օրերը: 1910-ի մարտի 15-ին Գարեգին Խաչատրյանին ուղղված նամակում Կոմիտասը գրում է. «Իրավ է, ես գտել եմ հայկական խազերի բանալին և նույնիսկ կարդում եմ պարզ գրվածքներ, բայց դեռ վերջակետին չեմ հասել. զի յուրաքանչյուր խազի խորհրդավոր իմաստին թափանցելու համար, նույնիսկ տասնյակ ձեռագիրներ պրպտելով, երբեմն ամիսներ են սահում, իսկ ձեռքիս տակն

[17] Գրական նշխարք Կոմիտաս վարդապետի բեղուն գրչեն, էջ 26:

եղած խազերը, այն էլ անուն ունեցողները, 198 հատ են առ այժմ. մի կողմ թողնենք դեռ անանուն խազերը, որոնք խիստ շատ են»[18]:

Կոմիտասի մահից անցել են յոթ և կես տասնամյակ, սակայն մինչ օրս, ի զարմանս մեզ, մեր միջնադարագետ-երաժշտագետները դեռ չեն գտել այն, ինչը տքնաջան աշխատանքի շնորհիվ հայտնագործեց Կոմիտասը և ինչն այդպես հանելուկային կերպով կորսվեց: Արդյո՞ք միջնադարագետ-երաժշտագետներն ի զորու չեն ավարտին հասցնել հայ երաժշտագիտության համար հույժ կարևոր այդ գործը: Կարծում եմ, հենց դա պետք է լինի միջնադարագետների ուսումնասիրությունների առաջնահերթություններից գլխավորը, մանավանդ, որ դրա կարևորության մասին ասվել է բազմիցս[19]:

Կոմիտասի մեծագույն փափագն էր հայ երեխաների համար երաժշտական կրթության ապահովումը, ազգային երաժշտական մասնագիտական կադրեր պատրաստող հաստատությունների ստեղծումը. նրա գերագույն երազանքն էր ազգային կոնսերվատորիան: Եվ, չնայած առկա բազում դժվարություններին՝ այդ ուղղությամբ կատարում էր գործնական քայլեր:

1910-ին Կ.Պոլսում «Գուսան» երգ- չախմբի բազմաթիվ համերգների ու դասախոսությունների հասույթը նա խնամքով հավաքում էր՝ հայկական ազգային կոնսերվատորիա հիմնելու նպատակով: 1911- ի հունիսի 12-ին Կոմիտասը Մարգարիտ Բաբայանին Կահիրեից գրում է. «Հույս ունեմ Կ. Պոլսո մեջ մի երաժշտարան բանալու, բայց դեռ խնդիրը ծեծվում է խոսքով, երբ որ հոսոսները գործի անցնեն, բանն էլ կպսակվի»: Իսկ Կոմիտասի՝ 1912-ի մարտի 28-ին նրան ուղղված նամակում կարդում ենք. «Այժմ բոլոր ուժերս կրկնապատկել եմ, որ երաժշտանոցի գործը գլուխ բերեմ. ուզում եմ նախ շենքը գլուխ բերել, որ տնական լինի. ուստի գործը ձգձգվում է մի քիչ, բայց հոգ չէ, հույսս վառ է, անպատճառ գլուխ պիտի հանեմ և քեզ էլ պիտի քաշ տամ էստեղ»:

Կոնսերվատորիա ստեղծելու Կոմիտասի գաղափարին ջերմորեն արձագանքում է մամուլը: 1912-ի ապրիլի 1-ին Կ. Պոլսի Պտի Շանի ձմեռային թատրոնում տեղի է ունենում կոնսերվատորիա հիմնելու ֆոնդին նվիրված Կոմիտասի «Գուսան»

[18] Կոմիտաս. Նամակներ, էջ 72:
[19] Տե՛ս Э. Мирзоян. Фрагменты. Ереван, 2005, с. 67.

երգչախմբի համերգը: Ապրիլ-մայիսին կայացած «Գուսանի» համերգների հասույթը նույնպես հատկացվում է հիմնվելիք հայկական կոնսերվատորիային:

Կոմիտասն անկրկնելի խմբավար էր: «Անոնք, որ բախտ ունեցած են Կոմիտասի ծունկներուն տակ աշակերտելու կամ իր կազմած մեծ ու փոքր երգչախմբերուն մեջ երգելու,– հետագայում կհիշի Միհրան Թումաճանը,– վկա են, թե ինչպես, մեկ խոսքով մը կամ պատահական ակնարկով մը, կամ դեմքի անակնկալ շարժումով մը կը միավորեր, կը համադրեր՝ հայ երգը հայերեն ու սրտանց երգելու անմոռանալի ճաշակը տալով նրանց:

Նմանապես իբրև խմբավար՝ երգչախմբի ընդհանուր փորձերու ատեն կամ համերգներու ամենահանդիսավոր պահերուն, Կոմիտասի բազմաբեղուն ու բազմալար հանճարը դուրս կը պոռթկար իր մարմնեղեն կառուցվածքեն, կարծես անտեսանելի հոգի մըն էր, որ մարմին առած էր ու կը թևածեր անհունության մեջ»:

Եվ այսպես՝ հայ երաժշտական արվեստի հետագա զարգացումն ընթացավ Կոմիտասի նախանշած ուղիով, իսկ դրա համար անհրաժեշտ պայմաններ ստեղծվե- ցին միայն Խորհրդային Հայաստանում: Ստեղծվեց Հայաստանի կոմպոզիտորների միության մեջ միավորված հզոր կոմպոզիտորական դպրոց, որը հայ երաժշտությունը տարածեց աշխարհով մեկ: Մի կողմից՝ հորինվեցին ինքնատիպ ստեղծագործություններ, մյուս կողմից՝ հայ կոմպոզիտորների ստեղծագործության անբաժանելի մասը դարձան ժողովրդական երգերի մշակումները. ընդ որում ոչ միայն ձայնի ու երգչախմբի, այլև՝ տարբեր կազմերի համար:

ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ Է ՄԵԿ ԴԱՍ

ԹԵՄԱ՝ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ուսուցանել «Կաքավի երգը», երաժշտ.՝ Կոմիտասի, խոսք՝ Հ.Թումանյանի:

Ունկնդրել «Կաքավի երգը» լարային քառյակի կատարմամբ:

Դասի նպատակները

Բացատրել երեխաներին երաժշտությունից և գրականությունից ստացված նոր ժանրերը:

Զարգացնել երգը մաքուր և արտահայտիչ կատարելու, երաժշտությունը վերլուծելու և մեկնաբանելու կարողությունները:

Արժևորել Կոմիտասի երաժշտությունը, և սեր առաջացնել դեպի դասական երաժշտություն:

Դասի ավարտին երեխաները պետք է իմանան երկու արվեստի՝ տեսակներից ստեղծված նոր ժանրերը: Նշեն արվեստի տեսակների մասին:

Երգել մաքուր և արտահայտիչ, որոշել հնչող երաժշտության բնույթն ու տրամադրությունը և կատարել բնույթին համապատասխան շարժումներ:

Դասի ընթացքը

Խթանման փուլ

Մտագրոհի միջոցով ճշտել «արվեստ» բնագավառի մասին սովորողների գիտելիքները, նշել նրա ճյուղերը:



Իմաստի ընկալման փուլ

Պատմել երաժշտության և գրականության փոխկապակցվածության մասին:
Հնարավորություն տալ աշակերտներին՝ ազատ արտահայտելու իրենց կարծիքները, ներկայացնելու երաժշտության և գրականության նմանություններն ու առանձնահատկությունները:
Ամփոփում ենք երեխաների պատասխանները և ամբողջացնում թեման:

Սովորեցնել արտահայտիչ կատարել «Կաքավի երգը»՝ հետևելով երգի նրբերանգներին։

Ունկնդրել «Կաքավի երգը» լարային քառյակի կատարմամբ, համեմատել սովորած երգի հետ։

Առաջարկել երեխաներին հորինել շարժումներ, որոնք կհամապատասխանեն երաժշտության բնույթին և տրամադրությանը, նաև նկարել երաժշտությունից ստացած իրենց տպավորությունները։

Կշռադատման փուլ

Ամփոփել դասը, և գալ ընդհանուր եզրահանգման, որ երաժշտությունն ու գրականությունը սերտորեն կապված են միմյանց ։

«Վենի դիագրամ» մեթոդով ամբողջացնել աշակերտների պատկերացումները երաժշտության և գրականության առանձնահատկությունների և ընդհանրությունների մասին՝ արժևորելով կոմիտասյան երաժշտության բարձրարժեքությունը։



Դասն ավարտել «Կաքավի երգի» կատարմամբ։

Եզրակացություն

Ամփոփելով աշխատանքը, գալիս ենք այն եզրակացության,որ Կոմիտասն ստեղծել էր մանկավարժական ավարտուն համակարգ, որտեղ խիստ կարևորվում էր ուսուցչի դերը մատաղ սերնդի դաստիարակության գործում: 1912-ի սեպտեմբերի երկրորդ տասնօրյակին Կ.Պոլսում հարյուրավոր երաժիշտ-մանկավարժների և մասնագետների համար Կոմիտասը դասախոսություն է կարդում «Մանուկն ու պարը» թեմայով, ուր, մասնավորապես, ասվում էր. «Եթե մանուկը չի հասկնար ձեր դասավանդությունը, հանցանքը ձերն է, որովհետև չեք կրցած հասկնալ անոր հոգին, պետք է իջնել մինչև անոր հոգեկան աստիճանը և զայն առնելով ձեզի հետ բարձրանալ: Սխալ դաստիարակության արդյունքն է, որ շատերը, որոնք հանճարներ պիտի ըլլային, եղած են գողեր ...»:

Ապա. «Ուսուցիչ պարոննե՛ր ու քույրեր, զգուշությամբ և երկյուղածությամբ մոտեցեք դաստիարակության գործին. խիստ փափուկ պաշտոն մըն է ձերը: Դաստիարակելու կոչված եք սերունդ մը, որ ապագա ազգն են: Սխալ ուղղությամբ՝ ազգ մը կը խորտակեք վերջը ...»: Կոմիտասը կարևորել է երաժշտական դասագրքերի հայերենով ստեղծման գործը և լրջորեն զբաղվել դրանով: Այդ են վկայում նրա «Պատմութիւն երաժշտութեան», «Տարրական երաժշտութիւն. տեսական եւ գործնական դասընթաց», «Դաշնակութիւն» դասագրքերը...

Բացառիկ էր Կոմիտասի հոգատարությունն իր աշակերտների ու նրանց ապագայի հանդեպ: Իր սիրելի սան Արմենակ Շահմուրադյանի ճակատագրով մտահոգ Կոմիտասն Էջմիածնից լուր է ուղարկում Էրզրում. «Ասացեք Արմենակին՝ չնստի մնա Էրզրում, պետք է անպայման Իտալիա երթա՝ ձայնը մշակելու»:

«Այդ օրը, նվագահանդեսին վերջավորության, կուլիսին մեջ, հուզական պատկեր մը ստեղծվեցավ. Կոմիտաս ողջագուրեց իր անցյալ ճեմարանական սան Արմենակ Շահմուրադյանը, մինչ այնտեղ հավաքված «Գուսան» երգչախումբի սաները և երաժիշտները ծափահարելով՝ թարմ ծաղիկներ կը սփռեին անոնց վրա... Հուզվեցավ Կոմիտաս՝ մեծ ուսուցիչը և իր նախկին սանի՝ օրվա հերոսի ճակատը համբուրեց և ըսավ. «Իմ միակ փափագս է քեզ լսել մեր հայրենի օպերաներուն մեջ...»:

Օգտագործված գրականության ցանկ

1. Գուրգեն Գասպարյան, «Կոմիտաս Վարդապետ (1869-1935)», Երևան, 2009
2. Գուրգեն Գասպարյան, Մարինե Մուշեղյան «Կոմիտաս Վարդապետ. ուսումնասիրություններ և յոդուածներ», Երևան, 2007
3. Գուրգեն Գասպարյան, «Կոմիտասը ժամանակակիցների հուշերում և վկայություններում», Երևան, 2009
4. Գուրգեն Գասպարյան, «Կոմիտաս Վարդապետ. նամականի», Երևան, 2009:
5. Ժամանակակիցները Կոմիտասի մասին, Երևան, 1960:
6. Ավետիք Իսահակյան, Երկերի ժողովածու, հատ. 5, Երևան, 1977, էջ 66-69:
7. Երուանդ Տէր-Մինասեանի յուշերը Կոմիտաս վարդապետի մասին, «Էջմիածին» ամսագիր, խմբ. Ա. Մաղոյան, Վաղարշապատ, 2015, թիւ Զ, էջ 136-153:
8. Atayan, Robert, ed. (2001): Essays and Articles, The musicological treatises of Komitas Vardapet: Vatche Barsoumian (translator): Pasadena, California: Drazark Press: OCLC 50203070
9. Begian Harry (1964): Gomidas Vartabed: His Life and Importance to Armenian Music: University of Michigan
10. Karakashian Meline (2011): Կոմիտաս՝ Հոգեբանական Վերլուծում Մը [Gomidas: A Psychological Study] (Հայերեն): Antelias, Lebanon: Armenian Catholicosate of Cilicia: ISBN 978-9953021638
11. Komitas, Vardapet (1998): Armenian Sacred and Folk Music: Edward Gulbekian (translator): Surrey, England: Curzon Press
12. McCollum Jonathan, Nercessian Andy (2004): Armenian Music: A Comprehensive Bibliography and Discography: Lanham, Maryland: Scarecrow Press: ISBN 9780810849679
13. Church Michael (ապրիլի 21, 2011): «Komitas Vardapet, forgotten folk hero»: The Guardian: Վերցված է 2014 թ. հունվարի 26
14. Toumani Meline (հոկտեմբերի 17, 2008): «Songs Lifted in Praise of an Armenian Hero»: Նյու Յորք Թայմս: Վերցված է փետրվարի 14, 2014